

## Հ Ր Ա Մ Ա Ն N 151-Լ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ «06» ՄԱՅԻՍԻ 2019 Թ. ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2018  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի N 346-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2019 թվականի ապրիլի 12-ի N 124-Լ հրամանը.

### Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 16-ի «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» N 346-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 28-30-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«28. Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

- 1) Տեսչական, վերլուծական և աճուրդի կազմակերպման բաժինը.
- 2) Իրավաբանական բաժինը.
- 3) Հարկադիր կատարման օպերատիվ բաժինը.
- 4) Վարչական ակտերով բռնագանձումների բաժինը:

29. Ծառայության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

- 1) Անձնակազմի կառավարման բաժինը.
- 2) Ֆինանսական բաժինը.
- 3) Տնտեսական բաժինը.
- 4) Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և համակարգի ավտոմատացման բաժինը.

5) Ընդհանուր բաժինը:

30. Ծառայության տարածքային մարմիններն են՝

- 1) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժինը.
- 2) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք բաժինը.
- 3) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժինը.
- 4) Երևան քաղաքի Էրեբունի-Նուբարաշեն բաժինը.
- 5) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժինը.

- 6) Երևան քաղաքի Շենգավիթ բաժինը.
  - 7) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա բաժինը.
  - 8) Ալիմենտի բռնագանձման Երևան քաղաքի բաժինը.
  - 9) Պետական եկամուտների կոմիտեի օգտին, դատախազության հայցերով և քրեական գործերով բռնագանձումների բաժինը.
  - 10) Կոտայքի մարզային բաժինը.
  - 11) Արարատի մարզային բաժինը.
  - 12) Արմավիրի մարզային բաժինը.
  - 13) Արագածոտնի մարզային բաժինը.
  - 14) Շիրակի մարզային բաժինը.
  - 15) Լոռու մարզային բաժինը.
  - 16) Տավուշի մարզային բաժինը.
  - 17) Գեղարքունիքի մարզային բաժինը.
  - 18) Վայոց Ձորի մարզային բաժինը.
  - 19) Սյունիքի մարզային բաժինը:»:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ**

07.05.2019

**X**



Artak Zeynalyan